ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/125

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ
Մասնակից՝ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Խաչատրյանի, ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տնտեսական և կենցաղային ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7332-2021 գրությամբ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.05.2021թ. թիվ 10.1/2293-2021 գրության հիման վրա, 11.05.2021թ.-ին «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.05.2021թ.-ին:

11.05.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/125 համարի ծածկագիրը:

18.05.2021թ.-ին և 10.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.06.2021թ.-ին:

2. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը 04.05.2021թ. թիվ 10.1/2293-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը տնտեսական և կենցաղային ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-21/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել է 15.04.2021 թվականին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում բացակայում է 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» դաշտերը: 2-րդ չափաբաժնում հստակ չէ երաշխիքային ժամկետը և աշխատաժամանակը, ինչպես նաև «Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր)» նախադասությունը և «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» դաշտերը ենթակա են շտկման: 3-րդ չափաբաժնում հստակ չէ «Radium Ralux Trio/E Plus կամ համարժեք» նախադասությունը և աշխատաժամանակը, ինչպես նաև հստակ չեն երաշխիքային ժամկետը և «Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր)» նախադասությունը, նաև «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» դաշտերը ենթակա են շտկման: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել 26.04.2021թ.-ին առաջարկելով մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկվել են մասնակի:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել է վերջինիս հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-21/18» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 25.05.2021թ.-ին ներկայացրած մեկ այլ գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերությանը (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած թիվ՝ ՍՅ-ԼՕ-2021/125 ծածկագրով ընթացակարգը:

1. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը տնտեսական և կենցաղային ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-21/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել է 15.04.2021 թվականին: Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Գնահատող հանձնաժողովը՝ Կարգի 41-րդ կետի պահանջները՝ նույն օրը Մասնակցին ծանուցել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ: Մասնակիցը, 27.04.2021-թ-ին Հանձնաժողովին է ներկայացրել հայտի շտկված տարբերակը, սակայն, Հանձնաժողովը, ուսումնասիրելով Մասնակցի ներկայացրած շտկումները, արձանագրել է, որ շտկումները չեն կատարվել, ինչի կապակցությամբ Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Կարգի 45-րդ կետի պահանջների համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովն իր՝ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է տրամադրել «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերության տվյալները՝

«Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերությունը ՀՀ գումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է իր գրավոր դիրքորոշումը:

1. Անդրադառնալով Մասնակցի՝ 2-րդ և 3-րդ շաւիաբաժիններում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ դիրքորոշմանը՝ հարկ ենք համարում նշել, որ Մասնակցի հայտում ներկայացված չի եղել 1-ին շափաբաժնի «տեխնիկական բնութագիր», «ապրանքային նշան» և «արտադրողի անվանումը» սյունակները, իսկ 2- րդ և 3-րդ շաւիաբաժիններում «ապրանքային նշան» և «արտադրողի անվանումը» սյունակները ենթակա են եղել շտկման՝ հստակեցման:

Մինչդեռ, Մասնակիցը, սահմանված ժամկետում ներկայացնելով հայտի շտկված տարբերակը, չի շտկել Պատվիրատուի կողմից մատնանշված անհամապատասխանությունները, ավելին շտկված հայտում ներկայացրած 1-ին շափաբաժնում «ապրանքային նշան» և «արտադրող անվանումը» սյունյակները նույնպես ներկայացրել է անհամապատասխանություններով:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հասարարում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նան մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ ցեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը (...):

ՀՀ ֆինանսների նախարարությունն ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալի՝ 02.06.2020 թ.թիվ 1.4/3895-2020 գրության պարզաբանել է, որ հրավերի 1.1 հավելվածի «Ֆիրմային անվանումը» սյունյակը վերաբերում է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքն արտադրողի ֆիրմային անվանմանը (կից ներկայացվում են ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավարի տեղակալի 02.06.2020թ. թիվ 1.4/3895-2020 գրության պատճենը և ՀՀ Ֆինանսների նախարարի առաջին տեղեկալի գրության պատճենը):

Քաղաքացիական օրենսգրքի 1166.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ 1. Ֆիրմային անվանումն այն անվանումն է, որի ներքո առևտրային կազմակերպությունը իրականացնում է իր գործունեությունը և տարբերվում այլ իրավաբանական անձանցից: 2. Ֆիրմային անվանումը պետք է բովանդակի իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը բնոբոշող բառեր և տարբերակող նշանակության առնվազն մեկ անուն՝ հատուկ անուն (անձնանուն, տեղանքի կամ խորհրդանշական անվանում), հասարակ կամ մտացածին անուն կամ տառերի հերթականություն:

Քաղաքացիական օրենսգրքի 1176-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքային և սպասարկման նշանը այն նիշն է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայությունները այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ Մասնակիցը պարտավոր էր հստակ նշելու՝ հստակեցնելու ապրանքի ապրանքային նշանը, իսկ

արտադրողի անվանումը նշելիս պարտավոր էր նշել նաև տվյալ կազմակերպության կազմակերպական-իրավական ձևը, ինչը տվյալ դեպքում չի կատարել:

Մասնակցի կողմից ներկայացրած դիրքորոշմամբ 2-րդ և 3-րդ չափաբաժինների անհամապատասխանությունների վերաբերյալ ներկացրած աղյուսակների մասով հարկ ենք համարում նշել, որ նա ըստ էության արտագրվել է Պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագիրը սյունակում նշված տվյալները՝ առանց դրանք հստակեցնելու:

Մասնավորապես՝ Մասնակիցը պարտավոր էր իր ներկայացրած հայտում հստակ նշելու՝ իր կողմից մատակարարվելու էր «Redium Ralux trio/E Plus» ապրանքանիշի տնտեսող լամպ, թե այլ՝ դրան համարժեք (այս դեպքում նշելով համարժեք ապրանքանիշի լամպի անվանումը), ինչը Մանսակիցը չի կատարել:

Մասնակցի կողմից ներկայացված հայտի 2-րդ և 3-րդ չափաբաժիններում հստակ նշված չեն եղել և այնուհետև չեն շտկվել Պատվիրատուի կողմից մատնանշված անհամապատասխանությունները՝ կապված տվյալ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված աշխատաժամանակների և երաշխիքային ժամկետների հետ: Մասնավորապես, Պատվիրատուի կողմից ներկայացրած հրավերում երաշխիքային ժամկետը համապատասխանաբար բոլոր չափաբաժիններում նշված է եղել նվազագույնը՝ 1 տարի՝ Մասնակիցներին հնարավորություն տալով իրենց կողմից ներկայացնելու 1 տարուց ոչ ցածր, բայց մեկ տարի կամ ավելի երկար երաշխիքային ժամկետ ունեցող ապրանք: Այս դեպքում Մանակիցը պարտավոր էր հստակ նշել, թե իր կողմից առաջարկվող ապրանքն ինչ երաշխիքային ժամկետ ունի:

Նույնը վերաբերում է նաև աշխատաժամանակին՝ Մասնակիցը 2-րդ և 3-րդ չափաբաժիններում չի հստակեցրել իր կողմից առաջարկվող ապրանքի աշխատաժամանակը, ներկայացրել է ոչ հստակ՝ նվազագույն տարբերակները, մինչդեռ նա պարտավոր էր ներկայացնելու յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված տնտեսող լամպի համար համապատասխան հստակ աշխատաժամանակը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից Ականավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, (...):

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: (...)

Վերոնշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի համակարգված վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերությունը Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել 1.1 հավելվածի 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսված տնտեսող լամպերի ապրանքային նշանների և արտադրողի անվանումների անհամապատասխանությունները՝ չնշելով դրանք: Իսկ 1-ին չափաբաժնով նախատեսված տնտեսող լամպի համար դարձյալ հստակ չի նշել ապրանքային նշանը և արտադրողի անվանումը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ այս մասով Հանձնաժողովի կողմից «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերության հայտի մերժելն իրավաչափ է, քանի որ Մասնակիցը չի կատարել Հրավերի 8.9-րդ կետի և Կարգի 41-րդ կետի պահանջները:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից արտահայտած այն դիրքորոշմանը, թե Պատվիրատուն Հայտը շտկելու վերաբերյալ ծանուցումն ուղարկել է Մասնակցին ոչ թե «անհամապատասխանությունը» արձանագրելու օրը՝ 22.04.2021 թ.-ին, այլ 4 օր հետո՝ 26.04.2021թ-ին, և որ Պատվիրատուն արձանագրությունը և ծանուցումը կազմել և ուղարկել է Մասնակցին Կարգի 41-րդ կետի պահանջների խախտմամբ, գտնում ենք, որ անհիմն է:

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: (...)

Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-21/18 ծածկագրով գնանշման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը

22.04.2021թ.-ին է եղել, ինչպես նաև այն, որ նշված ընթացակարգով նախատեսված է եղել 14 չափաբաժին և հայտ են ներկայացրել 5 մասնակից՝ Հանձնաժողովը, ծավալուն աշխատանքը մանրամասն ուսումնասիրելու և ճիշտ գնահատելու համար, հայտերի գնահատումն իրականացրել և բնականաբար անհամապատասխանություններն արձանագրել է, ոչ թե հայտերի բացման օրը, այլ Կարգով սահմանված տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ բացման օրվանից՝ 22.04.2021 թ.-ից հաշված երրորդ աշխատանքային օրը՝ 26.04.2021թ.-ին:

Բացի այդ ըստ վերոնշյալ նորմի պահանջների՝ գնահատումն իրականացվում է հայտերի վերջնաժամկետը լրանալու օրվանից, տվյալ դեպքում՝ 22.04.2021 թվականից տասն աշխատանքային օրվա ընթացքում: Տվյալ դեպքում հայտերի վերջնական գնահատումը՝ Հանձնաժողովի՝ 22.04.2021թ. թիվ 2 արձանագրության համաձայն իրականացվել է 03.05.2021թ-ին, այսինքն՝ հայտերի վերջնաժամկետը լրանալու օրվանից՝ 22.04.2021թ.-ից տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպիսով Հանձնաժողովը՝ հայտերի գնահատումն ավարտելով 26.04.2021թ-ին՝ նույն օրը հայտերում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցել է Մասնակիցներին՝ կասեցնելով նիստը և մեկ աշխատանքային օր տրամադրելով մասնակիցներին՝ համապատասխան շտկումներն իրականացնելու նպատակով:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստական հանգամանքները և հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի, 41-րդ, 42-րդ և 45-րդ կետերի պահանջները՝ գտնում ենք, որ Հանձնաժողովի կողմից «Մեթր-Սթիլ» ՍՊ ընկերության հայտի մերժելը և վերջինիս տվյալները լիազոր մարմնին տրամադրելն իրավաչափ է:»:

3. <u>«Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 12.05.2021թ.-ի գրությամբ դիմել է «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7332-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը, 18.05.2021թ.-ին ներկայացնելով ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում ՀՀ Ազգային ժողովի (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ԼՕ-2021/125 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 04.05.2021թ.-ին ստորագրված ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալի գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. Պատվիրատուն 15/04/2021թ.-ին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) և www.armeps.am էլեկտրոնային համակարգում հրապարակել է թիվ ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-21/18 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Մրցույթ): Մրցույթի 1-3-րդ չափաբաժինների մասով (այսուհետև նաև՝ Գնման առարկաներ) Մասնակիցը ներկայացրել է հայտ (այսուհետև նաև՝ Հայտ):

1.2. 22.04.2021 թվականի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ Մասնակցի Հայտի գնահատման արդյունքում սահմանվել է, որ

Մասնակցի ներկայացրած Հավելված 1.1-ում բացակայում է 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» դաշտերը: 2-րդ չափաբաժնում հստակ չէ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև «ապրանքը պետք է լինի չօգտագործված» (նոր)» նախադասությունը և «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» դաշտերը ենթակա են շտկման: 3-րդ չափաբաժնում հստակ չէ «Redium Ralux Trio/E Plus կամ համարժեք» նախադասությունը և աշխատաժամանակը, ինչպես նաև հստակ չեն «արտադրողի անվանումը» դաշտերը ենթակա են շտկման:

1.3. 22.04.2021թ.-ի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությամբ սահմանված «անհամապատասխանությունների» շտկման վերաբերյալ ծանուցումը Մասնակցին է ուղարկվել 26.04.2021թ.-ին:

1.4. 27.04.2021թ.-ին Մասնակիցը ուղարկել է պատվիրատուին Շտկված Հավելված 1.1.: Որտեղ նաև ներառվել է 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» դաշտերը:

1.5. Թիվ 2 արձանագրությամբ հրավերին անհամապատասխանող գնահատված տողերը՝ մինչև շտկումը Հավելված 1.1-ում նշված էին հետևյալ կերպ.

2-րդ չափաբաժին		
Հավելված 1.1-ի հրավերի նկատմամբ անհամապատասխան նկարագրությունը թիվ 2 արձանագրությամբ	***այդ տողերը Հավելված 1.1-ում մինչև շտկումը նշված էին հետևյալ կերպ***	***այդ տողերը Մրցույթի հրավերում նշված են հետևյալ կերպ***
հստակ չէ երաշխիքային ժամկետը	*Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 1 տարի:*	*Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 1 տարի:*
«արտադրողի անվանումը» դաշտերը ենթակա են շտկման	*ՉԺՀ SPIK*	*«տողը լրացված չէ»*
«ապրանքը պետք է լինի չօգտագործված» (նոր)» նախադասությունը ենթակա են շտկման	*Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր)*	*Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր)*
«ապրանքային նշանը» դաշտերը ենթակա են շտկման	*ԼԵԴ լամպ W40, FZ-QPADX-9*	*«տողը լրացված չէ»*
3-րդ չափաբաժին		
Հավելված 1.1-ի հրավերի նկատմամբ անհամապատասխան նկարագրությունը թիվ 2 արձանագրությամբ	***այդ տողերը Հավելված 1.1-ում մինչև շտկումը նշված էին հետևյալ կերպ***	***այդ տողերը Մրցույթի հրավերում նշված են հետևյալ կերպ***
հստակ չէ «Redium Ralux Trio/E Plus կամ համարժեք» նախադասությունը	*Radium Ralux Trio/E Plus կամ համարժեք*	*Radium Ralux Trio/E Plus կամ համարժեք*
հստակ չեն «արտադրողի անվանումը» դաշտերը	*ՉԺՀ PHilips*	*«տողը լրացված չէ»*
հստակ չէ աշխատաժամանակը	*նվազագույնը 20000 ժամ,*	*նվազագույնը 20000 ժամ*

1.6. Թիվ 2 արձանագրության 28.04.2021թ.-ի ժամը 12:00 որոշմամբ Մասնակցի Հայտը մերժվել է, մասնավորապես՝ արձանագրությաբ նշվել է, որ ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 42-րդ կետով «հանձնաժողովը» որոշեց Մասնակցի հայտը գնահատել անբավարար և Հանձնաժողովը

ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով, որոշեց մասնակցի փվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել լիազորված մարմին:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. Կարգի 41-րդ կետի Համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատաս-խանությունները: Նույն կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ եթե մասնակցի ներկայացրած հայտում գնահատման փուլում արձանագրվում են անհամապատասխանություններ, ապա գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնելով նեիստը՝ նույն օրը ուղարկում է մասնակցին արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցում, ընդ որում՝ ծանուցման մեջ անհամապատասխանությունները նկարագրվում են մանրամասն, որպեսզի մասնակիցը ծանուցումը ուսումնասիրելով հնարավորություն ունենա հստակ ընկալել թե հայտում ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Քանի որ ծանուցման և արձանագրության մեջ անհամապատասխանությունը հստակ նշված չլինելու պայմաններում, մասնակիցը զրկվելու է «անհամապատասխանությունը» շտկելու հնարավորությունից:

Ինչպես երևում է, սույն գործի փաստական հանգամանքներից Մասնակցի Հայտում արձանագրվել են «անհամապատասխանություններ» հրավերի պահանջների նկատմամբ: Որպես «անհամապատասխանություն» 1-ին չափաբաժնի մասով նշվել է, որ Հայտում բացակայում է տեխնիկական բնութագիրը, «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» դաշտերը, նշյալ «անհամապատասխանության» վերաբերյալ ծանուցումը 26.04. 2021թ.-ին ուղարկվել է Մասնացին: Հայտը շտկելու նպատակով Մասնակիցը 27.04.2021թ.-ին ուղարկել է Պատվիրատուին շտկված Հավելված 1.1., դրանում ներառելով այդ չափաբաժնի մասով իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը,

ապրանքային նշանը և արտադրողի անվանումը: Սակայն թիվ 2 արձանագրության 28.04.2021 թ.-ի ժամը 12:00 որոշմամբ Մասնակցի Հայտը մերժվել է: Հարկ է նշել, որ որոշումից պարզ չէ, թե ինչ անհամապատասխանության պատճառով է մերժվել մասնակցի 1-ին չափաբաժնի համար ներկայացված հայտը: Այդ որոշումը ձևակերպված է վերացական, և անհնար է դրանից հասկանալ հայտի մերժման համար հիմք հանդիսացած պատճառները, այն է՝ հստակ նշված չէ թե Հայտում ինչը չէր համապատասխանում հրավերի պահանջներին, որը հանգեցրել է Հայտը մերժելուն և սույն Ընթացակարգը նախաձեռնելուն:

Իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժիններում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ կարող ենք ասել, որ մեր կարծիքով այդ չափաբաժինների համար ներկայացված Հայտը՝ մինչև անգամ շտկումը համապատասխանում էր հրավերի պահանջներին: Դրա մասին են վկայում այս համեմատական աղյուսակները.

2-րդ չափաբաժին		
Հավելված 1.1-ի հրավերի նկատմամբ անհամապատասխան նկարագրությունը թիվ 2 արձանագրությամբ	***այդ տողերը Հավելված 1.1-ում մինչև շտկումը նշված էին հետևյալ կերպ***	***այդ տողերը Մրցույթի հրավերում նշված են հետևյալ կերպ***
հստակ չէ երաշխիքային ժամկետը	*Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 1 տարի:*	*Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 1 տարի:*
«արտադրողի անվանումը» դաշտերը ենթակա են շտկման	*ՉԺՀ SPIK*	*«տողը լրացված չէ»*
«ապրանքը պետք է լինի չօգտագործված» (նոր)» նախադասությունը ենթակա են շտկման	*Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր)*	*Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր)*
«ապրանքային նշանը» դաշտերը ենթակա են շտկման	*ԼԵԴ լամպ W40, FZ-QPADX-9*	*«տողը լրացված չէ»*
3-րդ չափաբաժին		
Հավելված 1.1-ի հրավերի նկատմամբ անհամապատասխան նկարագրությունը թիվ 2 արձանագրությամբ	***այդ տողերը Հավելված 1.1-ում մինչև շտկումը նշված էին հետևյալ կերպ***	***այդ տողերը Մրցույթի հրավերում նշված են հետևյալ կերպ***
հստակ չէ «Redium Ralux Trio/E Plus կամ համարժեք» նախադասությունը	*Radium Ralux Trio/E Plus կամ համարժեք*	*Radium Ralux Trio/E Plus կամ համարժեք*
հստակ չեն «արտադրողի անվանումը» դաշտերը	*ՉԺՀ PHilips*	*«տողը լրացված չէ»*
հստակ չէ աշխատաժամանակը	*նվազագույնը 20000 ժամ,*	*նվազագույնը 20000 ժամ*

Աղյուսակներից երևում է, որ հրավերում և Հայտում նշվածը իրար չեն հակասում, այսինքն՝ համապատասխանում են: Հետևաբար հրավերի պահանջների նկատմամբ Հայտում անհամապատասխանություններ առկա չեն:

Բացի այդ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Հայտում արձանագրված «անհամապատասխանությունները» ծանուցման և հանձնաժողովի արձանագրության մեջ հստակ նշված չեն: Եթե դրանք հստակ նշվեին, այսինքն՝ լինեին բավականաչափ որոշակի և ընկալելի, ապա հասկանալով Պատվիրատուի պահանջը, Մասնակիցը Հայտը կհամապատասխանեցներ այդ պահանջներին:

Նաև անհրաժեշտ ենք համարում նշել, որ Հայտը շտկելու վերաբերյալ ծանուցումը ուղարկվել է Մասնակցին ոչ թե «անհամապատասխանությունը» արձանագրելու օրը՝ 22.04.2021թ-ին, այլ 4 օր հետո՝ 26.04.2021թ.-ին:

Վերոգրյալից կարող ենք եզրահանգել, որ Պատվիրատուն արձանագրությունը և ծանուցումը կազմել, և ուղարկել է Մասնակցին Կարգի 41-րդ կետի պահանջների խախտմամբ: Արդյունքում սխալ կիրառելով Կարգի 42-րդ կետը ոչ իրավաչափորեն մերժել է Մասնակցի Հայտը: Ուստի, Մրցույթից բխող բացասական հետևանքները՝ ինչպիսին է այս Ընթացակարգը, չեն կարող մեկնաբանվել ի վնաս մասնակցի: Ուստի մեր կարծիքով սույն Ընթացակարգի շրջանակներում Մասնակիցը ենթակա չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման:»:

Մասնակիցը, 26.05.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշման լրացում, հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով ՀՀ Ազգային ժողովի առարկությունները հայտնում ենք, որ ամբողջությամբ պնդում ենք մեր դիրքորոշումը: Բացի այդ, ևս մեկ անգամ ցանկանում ենք նշել, որ Մասնակցի հայտում տեղ գտած ենթադրյալ անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցումը Պատվիրատուն ուղարկել է խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենքի) և ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526- Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ):

Իսկ հանձնաժողովի նիստերը օրենքին համաձայն անցկացված լինելու փաստը ապացուցելու համար խնդրում ենք՝ պարտավորեցնել Պատվիրատուին տրամադրել Կարգի 26- րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն արված՝ գնահատող հանձնաժողովի նիստերի տեսաձայնագրությունները կամ ձայնագրությունները:

1.1. Հայտում տեղ գտած ենթադրյալ «անհամապատասխանությունը» օրենքի խախտմամբ արձանագրելու և ուղարկելու վերաբերյալ.

Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք).

33-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 4-րդ կետի, 3-րդ մասի 5-րդ կետի և 8-րդ մասի համաձայն՝

«1. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: (...):

2. Հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, (...): Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: (...) սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:»:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ).

41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

26-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի համահամաձայն՝ Գնահատող հանձնաժողովի՝ գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ հայտերի բացման նիստի օրը և ժամին հրավիրվում է հայտերի բացման վերաբերյալ գնահատող հանձնաժողովի նիստ: Հանձնաժողովի նիստերը պարտադիր կերպով ենթակա են արձանագրման, այսինքն՝ յուրաքանչյուր նիստի, այդ թվում՝ հայտերի բացման, վերաբերյալ անհրաժեշտ է կազմել

արձանագրություն, որը ստորագրում են գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը: Հայտերի բացման նիստում, ի թիվս Օրենքով սահմանված այլ գործողությունների, գնահատող հանձնաժողովը գնահատում է մասնակիցների ներկայացրած հայտերի համապատասխանությունը տվյալ գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին: Եթե գնահատման արդյունքում Մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հայտերի բացման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվում է և նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը ծանուցում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նշյալից հետևում է, որ հրավերում նշված հայտերի բացման նիստի օրը գնահատող հանձնաժողովը գնահատում է մասնակիցների հայտերը և, եթե հայտերում արձանագրվում են հրավերի պայմանների նկատմամբ անհամապատասխանություններ, ապա գնահատող հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվում է և հանձնաժողովի քարտուղարը հրավերում նշված հայտերի բացման նիստի օրը արձանագրված անհամապատասխանության մասին ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալից կարող ենք փաստել, որ Մասնակցի հայտում տեղ գտած ենթադրյալ «անհամապատասխանությունը» անհրաժեշտ էր արձանագրել և շտկման մասին ծանուցումը ուղարկել հայտերի բացման նիստի օրը՝ 22.04.2021թ-ին, այլ ոչ թե 26.04.2021թ-ին: Նշյալից հետևում է, որ «անհամապատասխանությունը» ուշ արձանագրելու և ուղարկելու արդյունքում Պատվիրատուն խախտել է Օրենքի 33-րդ հոդվածը և Կարգի 41-րդ կետը:»:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-LO-2021/125 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2021/125 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից տնտեսական և կենցաղային ապրանքների ձեռքբերման նպատակով 15.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-21/18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 6.2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1 ում՝ բացակայում է 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» դաշտերը 2-րդ չափաբաժնում հստակ չէ երաշխիքային ժամկետը և աշխատաժամանակը, ինչպես նաև «Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր)» նախադասությունը և «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» դաշտերը ենթակա են շտկման: 3-րդ չափաբաժնում հստակ չէ «Radium Ralux Trio/E Plus կամ համարժեք» նախադասությունը և աշխատաժամանակը, ինչպես նաև հստակ չեն երաշխիքային ժամկետը և «Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր)» նախադասությունը, նաև «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» դաշտերը ենթակա են շտկման:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի՝ 28.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7332-2021 գրությամբ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն

աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով:

Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից տնտեսական և կենցաղային ապրանքների ձեռքբերման նպատակով 15.04.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 26.04.2021թ.-ին Մասնակցին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին նույնաբովանդակ ծանուցում: Մասնակիցը, 27.04.2021-թ-ին Հանձնաժողովին է ներկայացրել հայտի շտկված տարբերակը, սակայն, Հանձնաժողովը, ուսումնասիրելով Մասնակցի ներկայացրած շտկումները, արձանագրել է, որ շտկումները

շեն կատարվել, ինչի կապակցությամբ Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Մասնավորապես՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հրավերով 3-րդ չափաբաժնի համար սահմանված տնտեսող լամպ (լյումինեսցենտային) ապրանքատեսակի աշխատաժամանակը պետք է լիներ նվազագույնը 20000 ժամ, իսկ Մասնակցի կողմից որպես շտկում ներկայացված հավելված 1.1-ով՝ ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկվել է նվազագույնը 10000 ժամ, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ինչպես նաև անհամապատասխանություններ են արձանագրվել հրավերում սահմանված այլ պայմանների և մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ի տեխնիկական բնութագրերի միջև. 1-ին չափաբաժնում՝ կրկին աշխատաժամանակի մասով, 3-րդ չափաբաժնում ապրանքի և հրավերով պահանջվող նվազագույն հզորության միջև:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-

ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-21/18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ Պատվիրատուի կողմից 22.04.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունների մասին, սակայն համապատասխան շտկման մասին ծանուցումն ուղարկվել է ոչ թե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում, այլ 26.04.2021թ.-ին, Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից հայտերի բացումը և հայտերի գնահատումը կայացել է 22.04.2021թ.-ից մինչև 03.05.2021թ.-ը ընկած ժամանակահատվածում, ինչի արդյունքում Հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել 26.04.2021թ.-ին՝ պահպանելով Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով և Կարգի 41-րդ սահմանված պահանջները, այն է՝ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում՝ (տաս /10/ աշխատանքային օր) իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում անհամապատասխանություններ արձանագրելու պարագայում Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը՝ 26.04.2021թ.-ին, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին:

Վերոնշյալ իրավական և փաստական տվյալների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից իրականացված գործողությունները իրավաչափ են:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, թերի շտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7332-2021 գրությամբ «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/125 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մեթր-Սթիլ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**